# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

## 33. ՈՒԼՈՒԲԱԲ—ՊՏԿԵՍԲԵՐՔԻ ՎԱՆՔ

*Գյուղից արևելք մի բարձր սարի վրա գտնվում է Պտկի սուրբ Գևորգ, կամ ժողովրդական լեզվով՝ Պտկեսբերքի վանքը։ Եկեղեցին շինված է սրբատաշ և կոփածո քարերով. ունի ցածր գմբեթ, ներքուստ՝ երկու սյուներ, որոնք խաչավորվելով բեմի կողերի հետ, պահում են գմբեթը. արևմուտքում ունեցել է հասարակ գավիթ, որի փլատակներն են մնում. շրջապատված է եղել պարսպով, որն այժմ ավերված է, նույնը և բակի տնտեսական շենքերը։*

*Այս վանքի հիմնադրման մասին տեղեկություններ չկան. մեր գտած հնագույն արձանագրության բեկորը ։ՋԿ։ թվականից է։ Մի ձեռագիր հիշատակարանում, որը գրված է այստեղ, նշված է 1940 թվականը[1]։ Բայց մի արձանագրության բեկորի վրա մնացած թերի թվականը, հավանաբար, ։ՉՂԶ։ (1347), պիտի լինի № 459-ը։ Մեր հավաքած արձանագրությունները թեև վերջին դարերին են վերաբերում, բայց բոլորն էլ նշում ենք, նկատի ունենալով վանքի և նրա միաբանների կատարած նշանակալի դերը[2]։*

***455. ԽԱՉՔԱՐԻ** բեկոր, փոքր և հասարակ, ագուցված է եկեղեցու հյուսիսային պատի մեջ, կողքից արտաքուստ. ներքևի մասում թերի 2 տող.*

ԹՎ ՋԿ-Ե-
ԽՉՍ ՄԻ····

ԹՎ[ԼԻ]Ն[Յ]: ՋԿ: (1511) · · Խ[Լ]Ա[Յ]ՉՍ ՄԻ · · · · ·

***456. ԵԿԵՂԵՑՈՒ** հարավարևելյան ավանդատան առաստաղին, ծեփի վրա սև ներկով, 1 տող.*

ՕՎՍԷՓ ՎԱՐԴՊՏ ՌՃԽԷ

ՕՎՍԷՓ ՎԱՐԴ[Ա]Պ[Ե]Տ. :ՌՃԽԷ: (1698):

***457. ԵԿԵՂԵՑՈՒ** հարավարևմտյան սյունը և պատը միացնող կամարի վրա, երեսով արևմուտք, ծեփի վրա քանդակված մեծ տառերով 2 տող.*

ՕՎՍԷՓ
ՎՐԴՊՏ

ՕՎՍԷՓ|Վ[Ա]ՐԴ[Ա]ՊԵՏ.

---

[1] Հ. Աճառյան, *Ցուցակ հայերէն ձեռագրերի Նոր Բայազէտի*, էջ 22։

[2] *«Արձագանք», 1886, էջ 578, «Արարատ», 1896, էջ 44—45,* Լեօ, *Իմ հիշատակարանը, էջ 408—409։* Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն, Ա, 196։* Բարխուդարեանց, *Արցախ, 192։*

**458. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավ-արևելյան ավանդատան մեջ նեղ ու երկար գերեզմանաքարի երեսին կենտրոնում հովվական գավազան և 3 տող.*

ԱՅՍ ՏԱՊԱՆՕՍԷՓՎԱՐԴՊԵՏԻՆՈՐՆՈՐՈԳ
ԵԱԼՄ̅ԲԵԿԵՂԵՑԻՍՓՈԽԵԱԼԱՌ



ԱԾ···· Ս:ԱՐԾԱՆԿԱՆԳԵԱՑՁԵՌԱՄԲՂԿԱՍ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՕՍԷՓ Վ.ԱՐԴ.Ա.-
ՊԵՏԻՆ ՈՐ ՆՈՐՈԳ|ԵԱԼ Մ̅Բ. ԵԿԵ-
Ղ.ԵՑԻՍ. ՓՈԽԵԱԼ ԱՌ| Ա̅Ծ . . .
Ս.ՐԾԱՆՍ ԿԱՆԳ⌈Ն⌉ԵԱՑ ՁԵՌԱՄԲ
Ղ.⌈ՈՒ⌉ԿԱՍ⌊Ի⌋:

Ծանոթ. *Ջալալյանցը միայն հիշատակում է այս արձանագրությունը և Օսէփը կարդում Յովհաննէս։*

**459. ԵԿԵՂԵՑՈՒ** *ներսում, քարե խաչքարի հյուսիսային ոտքին ագուցված մի փոքր քար՝ հին արձանագրության մնացորդներով.*

ՂՁՔՍ ԱԾ
ՄԻՆՄԱՈՐ
· · ՍՆՈՐՈԳ
. . . . . . .

. . . . . . .

. . . —Ղ.Ձ: ՔՍ. ԱԾ.|
. . . . ՄԻՆՄԱՈՐ|
. . . . . Ս ՆՈՐՈԳ|
. . . . . . . . . .

Ծանոթ. *Արձանագրությունը միջին մասն է, սկզբից պակասող քարի վրա պետք է լինի նաև հարյուրավորը, հնագրական նկատառումներով այն լինելու էր Ո կամ Զ տառը։*

**460. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավարևմտյան սյան վրա, երեսով հյուսիս. 12 տող.*

ՌՄՁ
ԹՎ̅Ն
ԿԱՄԻՆ Ա̅Յ
ԵՍՂՈՒԿԱՍ ՎՐԴ̅Ս
ՇԻՆԵՑԻՄԷԿՃԱՂԱՑ
ԽԱՉԱՆԱԿԵՏԵԻԴՎ
ՎԱԽՄՆ Մ̅ԲՈՒԽԴԻՍԳԵԻ
ԵՐԳԱԻՓՐԿՈՒԹ̅ՀՈԳՈՑ
ԻՄՈՑՈՎՈՔՀԱՆԵԼՋԱՆ
ԱԳՃԺԸՀՐԱ̅ՊՏՑԲԺԱ̅Ն
ԱՌՔԵԼՈՑ
ՆՁՈՎՔ
ԱՌՑԷ +

:ՌՄՁ: (1757)|ԹՎԻՆ.| ԿԱՄԱՒՆ Ա̅Յ.
ԵՍ ՂՈՒԿԱՍ Վ⌈Ա⌉ՐԴ⌈Ա⌉Պ⌈ԵՏ⌉Ս|ՇԻՆԵ-
ՑԻ ՄԷԿ ՃԱՂԱՑ| ⌊Ի⌋ ԽԱՉԱՆԱԿԵՏ ԵԻ
ԴՎԻ |ՎԱԽՄՆ Մ̅Բ ՈՒԽԴԻՍ ԳԵԻ|ԵՐԳԱ
Ի ՓՐԿՈՒԹ̅Ի ՀՈԳՈՑ| ԻՄՈՑ: ՈՎ ՈՔ
ՀԱՆԵԼ ՋԱՆ|Ա :ԳՃԺԸ: (318) ՀՐԱ-
Պ⌈Ե⌉Տ⌈Ա⌉Ց Բ ԺԱՆ (ԵՐԿՈՏԱՍԱՆ)|ԱՌԱ-
ՔԵԼ⌈Ո⌉Ց|ՆՁՈՎՔ| ԱՌՑԷ:

Ծանոթ. *Ջալալյանցը ունի արձանագրության սկզբի մասի բովանդակությունը և թվականն էլ սխալ՝ ՌՄԼ։*

*Հրատ. Ջալալեանց, I, 193։*

**461. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, գտնվում է բակում, եկեղեցու հարավային պատի մոտ. երեսին 4 տող.*

ԱՅՍԷՏԱՊԱՆԽԱՉԱՏՕՐ
ՎԱՐԹԱՊԵՏԻՆՍԱԻ· · · · ·
ՈՐԴԻՄԱՆՈՉԱՐԻՆ
ՌՄ ԹԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱՉԱՏՕՐ|Վ.ԱՐԹԱՊԵ-
ՏԻՆ, ՍԱ ⌈ԷՐ⌉| ՈՐԴԻ ՄԱՆՈՉԱՐԻՆ.|
:ՌՄ: (1751) ԹՎԻՆ:

***462. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է նախորդի մոտ. երեսին 2 տող.***



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՒԼՈՒԲԱԲԻ ՈՐԴԻ| ԳԱՍՊԱՐԻՆ. :ՌՄԼԸ: (1789) ԹՎԻՆ:

***463. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին հովվական գավազան և 5 տող.***



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԻՄԷՕՆ ՎԱՐԴ|ԱՊԵ-ՏԻՆ, ՈՐ Ի:Ր ՄԻԱԲԱՆ ՍՐԲ|ՈՅՆ ԳԷՈՐ-ԳԱՅ ՋՕՐԱՎԱՐԻՆ.|ԻՇԱՏԱԿ Շ⌊Ի⌋ՆԵՑԻ ՍԱՐԳԻՍ| ԲԱԼԱՑԵԱՆ. 1815 ԱՄԻ:

***464. ԱԵՂԱՆԱՏԱՆ (ավերակ) մուտքի կողի ստորին քարի վրա 5 տող.***



ՅԻՇԱՏԱԿ Է| ԿԱՄԱՐԳՍ :Բ: |ՕԹԱՂՍ ՔԼԱ|ՆԻ ՂՈՒԿԱՍ ՎԱՐ|ԴԱՊԵՏԻՆ:

***465. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է գավթում, 2 տող.***



ԽԱՉՍ ՆԱԶԱՐ,| ԽԱԹՈՒՆ.

***466. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է նախորդի մոտ. 1 տող.***



Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋ ՄԱՐԳԱՐԻՏԻ.

***467. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդների մոտ, վրան չշարունակված, աջից ձախ շրջադիր 2 տող.***



ՅԱ· · · ·|ԽԱՉ Մ· · ·

## 34. ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂ

*Այս գյուղը տեղավորված է Շիկաքար կոչվող դժվարամատչելի քերծի գլխին, հին բերդի ավերակների մոտ, որին Ջալալյանցը Ջալաղանա բերդ անունն է տալիս։*

*Արձանագրություններ ունեցող հուշարձանները գտնվում են երեք կետերում։*

*Ա. Հին գերեզմանատան մնացորդներ, ուր կանգուն և ընկած վիճակում կան մի քանի խաչքարեր ու տապանաքարեր. հնագույնն ունի ։ՉԲ։ (1253) թվականը. գտնվում է գյուղի հարավարևմտյան կողմում՝ գյուղ մտնող ճանապարհի եզրին։*